



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ  
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2013թ. Տարբի 22 - ի թիվ 5/10

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ  
ՀԱՐՈՒՑԵԼՈՒ, ԻՐԱԿԱՆԱՅՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՅԻ, ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԻՔ  
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՅԻԿ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի  
գ) կետի պահանջով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական  
հանձնաժողովի աշխատանքների, այդ թվում՝ վարչական վարույթ հարուցելու,  
իրականացնելու, ինչպես նաև տուգանքների վճարման գործընթացի, օրինականության և  
արդյունավետության նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների  
վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ  
ՆԱԽԱԳԱՀ

Ի. ԶԱԽԱՐՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ,  
ԻՐԱԿԱՆԱՅՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ,  
ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ  
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**Վերահսկողության հիմքը՝** ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2012 թվականի  
հունվարի 17-ի թիվ 1/1 որոշումը:

**Վերահսկողության նպատակը՝** Իրականացնել վերահսկողություն՝ ՀՀ  
տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի  
աշխատանքների, այդ թվում՝ վարչական վարույթ հարուցելու, ինչպես նաև  
տուգանքների վճարման գործընթացի, օրինականության և արդյունավետության  
նկատմամբ:

**Վերահսկողության առարկան՝** ՀՀ տնտեսական մրցակցության  
պաշտպանության պետական հանձնաժողովի աշխատանքների, այդ թվում՝  
վարչական վարույթ հարուցելու, ինչպես նաև տուգանքների վճարման  
գործընթացի, օրինականությունը և արդյունավետությունը:

**Վերահսկողության ծավալը՝** ՀՀ տնտեսական մրցակցության  
պաշտպանության հանձնաժողովը՝ ներառյալ աշխատակազմը, տնտեսվարող  
սուբյեկտները (ընտրանքային):

**Վերահսկողության օբյեկտները՝** ՀՀ տնտեսական մրցակցության պետական  
պաշտպանության հանձնաժողով՝ ներառյալ աշխատակազմ, տնտեսվարող  
սուբյեկտներ (ընտրանքային):

*Վերահսկողության կատարման ժամկետը՝* 2012 թվականի հունվարի 17-ից մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը:

*Վերահսկողությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝* 2009 թվականի հունվարի 1-ից մինչև վերահսկողության կատարման ժամկետի ավարտը:

*Վերահսկողության մեթոդաբանությունը՝* Առաջադրված նպատակներին հասնելու համար ընտրվել են վերահսկողության՝ համապատասխանության և արդյունավետության (կատարողական) տեսակները:

Վերլուծության փուլում ամփոփվել են դիտարկման ընթացքում ուսումնասիրված տվյալները և կազմվել է ամբողջական ընթացիկ հաշվետվություն:

## **ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

### **1. ՀՀ պետական բյուջեի մուտքերի վերաբերյալ իրականացված դիտարկման արդյունքների վերլուծությունից պարզվեց**

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառված տուգանքների ընդհանուր գումարը բավական մեծ է, սակայն ՀՀ պետական բյուջե փաստացի մուտքագրված գումարները ավելի քիչ տոկոս են կազմում արձանագրված գումարների համեմատ՝ կապված այն հանգամանքի հետ, որ տուգանված տնտեսվարող սուբյեկտների մեծ մասը ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի որոշումները բողոքարկում են դատական կարգով և չեն մուծում տուգանքի գումարները:

### **2. Անբարեխիղճ մրցակցության մասով իրականացված դիտարկման արդյունքների վերլուծությունից պարզվեց.**

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, անբարեխիղճ

մրցակցության գործողության համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ նշանակվող տուգանքի չափը կազմում է տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև մեկ տոկոս: Սակայն միայն Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով է ընդհանուր ձևով կարգավորվում, թե հասույթի մինչև մեկ տոկոս խոշոր սանդղակի շրջանակներում ինչ չափանիշներ պետք է հաշվի առնի ՀՀ ՏՄՊՊՀ-ն տուգանք նշանակելիս: Չկա խախտում կատարած տնտեսվարող սուբյեկտների տուգանքի չափը հաշվարկելու հաստատված մեթոդաբանություն, որն էլ սուբյեկտիվ մոտեցումների հնարավորություններ է տալիս:

### *Օրինակ՝*

Ընկերությունների նկատմամբ միևնույն կամ մմանատիպ խախտման համար ՀՀ ՏՄՊՊՀ-ի կողմից նշանակված տուգանքների չափերը տարբերվում են կամ տրվում է նախազգուշացում, ինչը մեր գնահատմամբ ռիսկային գործընթաց է:

### ***3. Համակենտրոնացումը չհայտարարագրելու մասով իրականացված դիտարկման արդյունքների վերլուծությունից պարզվեց.***

Օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, համակենտրոնացումը չհայտարարագրելու համար տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ նշանակվում է տուգանք՝ համակենտրոնացմանը մասնակցելու նախորդ տարվա հասույթի մինչև չորս տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան հինգ հարյուր միլիոն դրամ: Սակայն միայն Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով է ընդհանուր ձևով կարգավորվում, թե հասույթի մինչև չորս տոկոս խոշոր սանդղակի շրջանակներում ինչ չափանիշներ պետք է հաշվի առնի ՀՀ ՏՄՊՊՀ-ն տուգանք նշանակելիս: Հետևաբար, չկա որևէ կոնկրետ մեթոդաբանություն, թե որ դեպքում, կոնկրետ որքան տոկոսի չափով պետք է տուգանվեն խախտում կատարած տնտեսվարող սուբյեկտները:

### ***4. Գերիշխող դիրքի չարաշահման մասով իրականացված դիտարկման արդյունքների վերլուծությունից պարզվեց.***

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, գերիշխող դիրքի չարաշահումն առաջացնում է տուգանքի նշանակում հինգ միլիոնից երկու հարյուր միլիոն դրամի չափով: Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով տրվում են միայն ընդհանուր ձևակերպումներ, թե 5 մլն-ից 200 մլն դրամ խոշոր սանդղակի շրջանակներում ինչ գործոններ պետք է հաշվի առնի ՀՀ ՏՄՊՊՀ-ն տուգանք նշանակելիս: Չկա հաստատված մեթոդաբանություն խախտում կատարած տնտեսվարող սուբյեկտների տուգանքի չափը հաշվարկելու համար:

ՀՀ ՏՄՊՊՀ-ի կայացրած որոշումների համաձայն, մի շարք տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ գերիշխող դիրքի չարաշահման համար կիրառվել են տուգանքներ 20 մլն, 100 մլն, 5 մլն դրամի չափով կամ տրվել է նախազգուշացում:

***5. Տնտեսվարող սուբյեկտների կողմից կատարված խախտումները վերացնելու և խախտմամբ շուկայում գտնվող ապրանքները իրացումից հանելու վերաբերյալ***

Մի շարք բնագավառներում ՀՀ ՏՄՊՊՀ-ի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են խախտումներ տնտեսվարող սուբյեկտների կողմից, սակայն տուգանք կիրառելուց հետո խախտումների վերացման հավաստիությունը ճշտելու վերաբերյալ ՀՀ ՏՄՊՊՀ -ի կողմից անհրաժեշտ գործողություններ չեն իրականացվել: Հանձնաժողովը հիմք է ընդունել այնպիսի տեղեկանքներ, որոնց կից հիմնավորող փաստաթղթեր գոյություն չունեն, միայն նշված է, թե խախտումները վերացված են: Հանձնաժողովի որոշումներում 2-րդ կետով հստակ ամրագրված է, որ խախտումով ապրանքները պետք է հանվի շրջանառությունից կոնկրետ ժամկետում, սակայն դիտարկման արդյունքում պարզվեց, որ որևէ ընկերության կողմից շրջանառությունից հանելու հետ կապված հիմնավորող հաշվապահական փաստաթղթեր և կամ պահեստավորելու կամ վերամշակելու հետագայում իրացման հետ կապված որևէ փաստաթուղթ չկա:

## ***Եզրակացություն***

1. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի տուգանքներ նշանակելու որոշումները դատական կարգով բողոքարկելու և այդ ընթացքի ձգձգվածության հետևանքով նշանակված գումարների շատ քիչ մասն է մուտքագրվում պետական բյուջե:
2. Անբարեխիղճ մրցակցության գործողության համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ նշանակվող տարվա հասույթի մինչև մեկ տոկոս կազմող տուգանքի չափը հաշվարկելու հաստատված մեթոդաբանության կամ իրավական որևէ այլ ակտի բացակայությունը տուգանքի նշանակման գործընթացը դարձնում է ռիսկային:
3. Գերիշխող դիրքի չարաշահում գործողության համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ 5-մլն-ից 200 մլն դրամ խոշոր սանդղակի շրջանակում նշանակվող տուգանքի չափը հաշվարկելու հաստատված մեթոդաբանության կամ իրավական որևէ այլ ակտի բացակայությունը տուգանքի նշանակման գործընթացը դարձնում է ռիսկային:
4. Համակենտրոնացումը չհարտարարագրելու համար տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ համակենտրոնացմանը մասնակցելու նախորդ տարվա հասույթի մինչև 4 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 500 մլն դրամ խոշոր սանդղակի շրջանակում նշանակվող տուգանքի չափը հաշվարկելու հաստատված մեթոդաբանության կամ իրավական որևէ այլ ակտի բացակայությունը տուգանքի նշանակման գործընթացը դարձնում է ռիսկային:
5. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ տուգանք կիրառելուց հետո, խախտումների վերացման հավաստիությունը ճշտելու վերաբերյալ հանձնաժողովը անհրաժեշտ գործողություններ չի իրականացնում:

## ***Առաջարկություններ***

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին՝

1. Տնտեսվարող սուբյեկտների տուգանքների պատական բյուջե մուտքագրման անհարկի ձգձգումները կանխելու նպատակով, համապատասխան ենթաօրենսդրական ակտերով կանոնակարգել ՀՀ ՏՄՊՊՀ-ի տուգանած տնտեսվարող սուբյեկտների կողմից ՀՀ պետական բյուջե չմուտքագրված գումարների մուտքերը պետբյուջե ապահովելու գործընթացը՝ սահմանելով դրա համար անհրաժեշտ մեխանիզմներ:
2. ՀՀ ՏՄՊՊՀ – ի կողմից տնտեսվարող սուբյեկտների տուգանելու գործընթացի կորուպցիոն ռիսկերի մակարդակը նվազեցնելու նպատակով, մշակել և հաստատել տուգանքի չափը հաշվարկելու համապատասխան մեթոդաբանություն կամ իրավական այլ ակտեր:
3. Համապատասխան ենթաօրենսդրական ակտերով կամ այլ մեխանիզմներով կանոնակարգել ընկերություններից փաստացի խախտումները վերացնելը հաստատող հաշվապահական հաշվառման փաստաթղթեր պահանջելու գործընթացը:

***«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետի համաձայն մեկամսյա ժամկետում վերահսկիչ պալատին գրավոր տեղեկատվություն տրամադրել ընթացիկ հաշվետվությունում ամրագրված՝ հայտնաբերված խախտումները վերացնելու վերաբերյալ***



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.  
Հեռ. 56-61-85. Ֆաքս 52-65-77  
Էլ. փոստ: [secretariat@mineconomy.am](mailto:secretariat@mineconomy.am)  
Վեբ կայք: [www.mineconomy.am](http://www.mineconomy.am)

Ձեռ. № 02/23.14/4624-13  
05.04.2013

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ  
ՊԱՐՈՆ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան,

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2013 թվականի ապրիլի 5-ի № 02/23.14/4624-13 հանձնարարականի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, համաձայն ՀՀ վարչապետի 2008 թվականի մայիսի 4-ի N 225-Ա որոշման, կից Ձեզ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձանաժողովի կողմից ներկայացված գրությունը:

Ադդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ԴԱՎԻԹՅԱՆ  
/ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ/





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Միեր Մկրտչյան 5<sup>բ</sup>, հեռ.՝ (+374 10) 54 56 37, ֆաքս (+374 10) 54 39 85  
Էլ-փոստ՝ a.shaboyan@competition.am, վեբ կայք՝ <http://www.competition.am>

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 \_\_\_\_թ.

No \_\_\_\_\_

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար  
պարոն Դ. Սարգսյանին

Պատճենը՝ ՀՀ ֆինանսների նախարարի  
պաշտոնակատար պարոն Վ.Գաբրիելյանին

Պատճենը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի  
պաշտոնակատար պարոն Տ.Դավթյանին

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2013 թվականի ապրիլի 5-ի թիվ 02/23.14/4624-13  
հանձնարարականի՝ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական  
հանձնաժողովի 11.04.13թ. N ԱՇ-647 գրությամբ ներկայացվել է ՀՀ վերահսկիչ պալատ

### Հարգելի պարոն Սարգսյան

Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի խորհրդի 2013 թվականի մարտի 22-ի  
թիվ 5/10 որոշմամբ հաստատված ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական  
հանձնաժողովի աշխատանքների, այդ թվում վարչական վարույթի հարուցելու, իրականացնելու,  
ինչպես նաև տուգանքների վճարման գործընթացի, օրինականության և արդյունավետության  
նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ  
հաշվետվությամբ (այսուհետ՝ Ընթացիկ հաշվետվություն) ամրագրված վերահսկողության  
արդյունքների, կատարված եզրակացության, ինչպես նաև ներկայացված առաջարկությունների  
վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

1. Ընթացիկ հաշվետվության «եզրակացություն» բաժնի 1-ին կետում նշված է, որ  
Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական  
հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) տուգանքներ նշանակելու որոշումների դատական  
կարգով բողոքարկելու և այդ ընթացքի ձգձգվածության հետևանքով նշանակված գումարների շատ  
քիչ մասն է մուտքագրվում պետական բյուջե: Այդ կապակցությամբ ընթացիկ հաշվետվությունում  
առաջարկություն է ներկայացվում Հանձնաժողովին ենթաօրենսդրական ակտերի միջոցով  
սահմանել անհրաժեշտ մեխանիզմներ նշանակված տուգանքների վճարումն ապահովելու համար:

Հարկ է նշել, որ Հանձնաժողովը «եզրակացություն» բաժնի 1-ին կետով բարձրացված  
խնդիրը լուծելու նպատակով տուգանքների կիրառման այնպիսի մեխանիզմ է մշակել, որը

կբացառի տնտեսվարող սուբյեկտների կողմից բողոքարկման գործընթացի ձգձգումը: Մասնավորապես, նախատեսվում է Հանձնաժողովի որոշմամբ սահմանված ժամկետում տնտեսվարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տուգանքը չվճարելու դեպքում կիրառել տույժ՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տուգանքի չվճարված մասի 0,1 տոկոսի չափով:

Հանձնաժողովը վերոնշյալ մեխանիզմի ներդրման հարցը քննարկելու է ՀՀ արդարադատության նախարարության հետ և համատեղ մշակվելու է նախատեսվող մեխանիզմի արդյունավետ տարբերակ, որն էլ կընդգրկվի «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում:

2. Ընթացիկ հաշվետվության «Եզրակացություն» բաժնում նշված է, որ անբարեխիղճ մրցակցության գործողության, գերիշխող դիրքի չարաշահման և համակենտրոնացումը չհայտարարագրելու համար տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ նշանակվող տուգանքների չափը հաշվարկելու հաստատված մեթոդաբանության կամ այլ իրավական ակտի բացակայությունը տուգանքի նշանակման գործընթացը դարձնում է դիսկալին: Ուստի տնտեսվարող սուբյեկտներին տուգանելու գործընթացի կոռուպցիոն ռիսկերի մակարդակը նվազեցնելու նպատակով Ընթացիկ հաշվետվությունում առաջարկ է ներկայացվում մշակել և հաստատել տուգանքի չափը հաշվարկելու համապատասխան մեթոդաբանություն կամ այլ իրավական ակտեր:

Առաջարկն ամբողջությամբ ընդունելի է և Հանձնաժողովը ներկայումս աշխատանքներ է իրականացնում Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոցների կիրառման չափանիշների որոշման վերաբերյալ ուղեցույցի մշակման և ընդունման ուղղությամբ:

3. Ընթացիկ հաշվետվության «Եզրակացություն» բաժնում նշված է, որ Հանձնաժողովի կողմից տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ տուգանք կիրառելուց հետո, խախտումների վերացման հավաստիությունը ճշտելու վերաբերյալ Հանձնաժողովը անհրաժեշտ գործողություններ չի իրականացնում, որի կապակցությամբ առաջարկ է ներկայացվում ենթաօրենսդրական ակտերով կամ այլ մեխանիզմներով կանոնակարգել ընկերություններից փաստացի խախտումները վերացնելը հաստատող հաշվապահական հաշվառման փաստաթղթեր պահանջելու գործընթացը:

Առաջարկն ընդունելի է և Հանձնաժողովը բարձրացված խնդրի լուծման նպատակով արդեն մշակում է համապատասխան ուղեցույց, որով կկանոնակարգվի տնտեսվարող սուբյեկտների կողմից խախտումների վերացման և Հանձնաժողովի որոշման կատարման (պահպանման) նկատմամբ իրականացվող վերահսկողության գործընթացը: Բացի այդ, Հանձնաժողովը կիրականացնի համապատասխան աշխատանքներ՝ դիտանցումներ, ուսումնասիրություններ, որոնք կապահովեն Հանձնաժողովի կայացրած որոշումների կատարման նկատմամբ վերահսկողություն՝ անհրաժեշտության դեպքում պարտադրելով տնտեսվարող սուբյեկտներին որոշումների լիարժեք կատարման համար իրականացնել համապատասխան գործողություններ:

Հարգանքով՝



Ա. Շարյան